**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

24 փետրվարի 2026թ.N Ե-1083

«ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ
ԹԵՐԵԶԱ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գալստյան

Ի պատասխան Ձեր 20.02.2026թ. էլեկտրոնային հարցման (մուտք՝ 20.02.2026թ. N Տ-598)՝ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված N 1-ի 50.1. կետի 2-րդ ենթակետով նախատեսված, Աբովյան համայնքի 2026 թվականի կարիքների համար թափառող կենդանիների ստերջացման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-26/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում 19.02.2026թ.-ին կնքված «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-26/19-1» ծածկագրով պայմանագրի (պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա) կատարման և ընդունման գործընթացին Ձեր մասնակցությունը հաստատվել է:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 23.02.2026թ.-ին «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-26/19-1» ծածկագրով պայմանագրին կից կնքվել է համաձայնագիր: Ծառայությունների մատուցումը կսկսվի համաձայնագրի կնքման օրվանից (պայմանագրով ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել 60 օրացուցային օր): Ծառայությունները մատուցվելու են յուրաքանչյուր օրացուցային օր: Ծառայությունների արդյունքների ընդունման կոնկրետ օրվա մասին Ձեզ լրացուցիչ կտեղեկացնենք: Պատասխանատու ստորաբաժանման աշխատանքային հեռախոսահամարն է՝ 060 536 444:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

*Կատ. Համայնքի ղեկավարի խորհրդական*
*Ա. Հարությունյան*
*+37460536418*